ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«24» հոկտեմբերի 2012թ. N 445

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
«ԱՐՏԱՄԵՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ԵՎ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով, 13-րդ հոդվածի 2-րդ կետի դ) ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. սեպտեմբերի 6-ի N 1137-Ն որոշումը.

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արտամետի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը անվանակոչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արտամետի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:

3.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արտամետի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ կանոնադրությունը նոր խմբագրությամբ սահմանված կարգով ներկայացնել իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ պետական գրանցման:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ